ԳԻՏԱԿԱՆԻ ՍՏՈՐՈՒՄՆԵՐ

ՄԱՆՈՒԿ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների.դոկտոր
ԽԱՉԱՏՈՒՐ ՄՆՋԻԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, քաղաքագետ

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ՄՈԴԵԼՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում դիտարկված են ժամանակակից պառլամենտարիզմի մոդելները և նրանց առանձնահատկությունները: Հիմնական հետազոտական ուղղվածությունը՝ ժամանակակից պառլամենտարիզմի զարգացման միտումների բարդ և հակասական էության բացահայտումն է:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ զարգացած պառլամենտարիզմ, ցահմանափակ պառլամենտարիզմ, նմանակային պառլամենտարիզմ, ռացիոնալիզացված պառլամենտարիզմ, խորհրդարանական պատասխանատվություն:

Ժամանակակից քաղաքական համակարգերում առանձնանում են հետևյալ մոդելները. 1. զարգացած, սահմանափակ, «նմանակային» պառլամենտարիզմ /կախված դրանցում պառլամենտարիզմի տարրերի իրականացման փաստական լիակատարությունից/, 2. «ռացիոնալացված», «մինիստրական», «բաժանված» պառլամենտարիզմ /կախված խորհրդարանի և պետական իշխանության այլ բարձրագույն մարմինների փոխհարաբերություններով սահմանված կարգից/:[1]

Առաջին շարքի մեջ մտնող պառլամենտարիզմի մոդելների մեջ արտացոլված են քաղաքական վարչակարգի ամբողջատիրական, ավտորիտար, ժողովրդավարական, իսկ երկրորդ շարքի մեջ՝ կառավարման ձևի /հանրապետություն, միապետություն/ և պետական կառուցվածքի /միակազմ, դաշնակցային, համադաշնակցային/ առանձնահատկությունները:

Զարգացած պառլամենտարիզմը կարող է գոյություն ունենալ և գործել միայն ժողովրդավարական այնպիսի հասարակություններում, որտեղ լիակատար կերպով իրականացված են իշխանությունների բաժանման և իրավունքի գերակայության սկզբունքները, գոյություն ունեն պառլամենտարիզմի հաստատուն ավանդույթներ, ինչպես նաև հասուն քաղաքացիական հասարակություն և քաղաքական կուսակցությունները:

Սահմանափակ պառլամենտարիզմը, որպես կանոն, կառուցված է խորհրդարանի լիազորությունների սահմանափակման և նրա նկատմամբ գործադիր իշխանության անուղղակի վերահսկողության մեխանիզմների վրա: Պառլամենտարիզմի այդ մոդելը բնորոշ է, օրինակ՝ Ռուսաստանի, Հայաստանի և ԱՊՀ այլ երկրների համար, որտեղ հիմնականում հայտարարված են /պաշտոնապես/ ժողովրդավարական ազատությունները և պառլամենտարիզմի հիմնարար սկզբունքները, սակայն դրանց իրականացման պրակտիկան ունի կեսկատար,

1 Романов Р.М. Парламентаризм: история и современность. – М., 2002, с.53-57.

թերավարտ և անհետևողական բնույթ:

Նմանակային պառլամենտարիզմի մոդելն առավել չափով բնորոշ է խիստ ավտորիտար և էլ ավելի մեծ չափով՝ ամբողջատիրական վարչակարգերին, որտեղ կարող է իրականացվել միայն պառլամենտարիզմի նմանակում, նմանակեղծում: Այդպիսի վարչակարգերում իշխանությունն ու քաղաքականությունը մենաշնորհականացված է, իշխանությունը գործում է օրենքների օգնությամբ, որոնք հիմնականում ընդունվել են ըստ իրենց հայեցողության, թուլացել է ներկայացուցչական ինստիտուտների և ընդդիմության դերը, խախտվել և սահմանափակվել է կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների ինքնավարությունը:

Ռացիոնալացված պառլամենտարիզմի մոդելն ուղղված է, նախևառաջ, նախագահական իշխանության ամրապնդմանը: Այդպիսի անհրաժեշտությունը ծագում է որպես գործադիր իշխանության թուլացման հաղթահարման միջոց, որը հարուցվում է քաղաքական անկայունությամբ: Ռացիոնալացված պառլամենտարիզմի մոդելի մեջ կան տարրեր, որոնք ներհատուկ են կիսանախագահական հանրապետությանը:

Պառլամենտարիզմի այդ տարատեսակն առաջին անգամ կիրառվել է Ֆրանսիայում՝ քաղաքական ճգնաժամը հաղթահարելու նպատակով: Այն հարուցվել էր օրենսդիր և գործադիր իշխանությունների լիազորությունների միջև հավասարակշռության խախտմամբ: Ֆրանսիայի հինգերորդ հանրապետության նոր Սահմանադրությունն ի վնաս օրենսդիր իշխանության՝ նախագահին օժտել էր լայն լիազորություններով: Ռացիոնալացված պառլամենտարիզմի մոդելի շրջանակներում Ֆրանսիայի նախագահի առանձնահատուկ վիճակն այն է, որ իր լիազորությունների շնորհիվ նա կարծես թե մասնակցում է իշխանության յուրաքանչյուր ճյուղի գործառնությանը, և միևնույն ժամանակ, դրանցից ոչ մեկը չի կարելի նույնացնել նախագահի կամ բացառապես նախագահի հետ:

Նախագահը չի կրում քաղաքական, այսինքն խորհրդարանական պատասխանատվություն: Բացի այդ, Ֆրանսիայի նախագահն օժտված է՝ պետական իշխանության կազմակերպմանն առնչվող ցանկացած օրինագիծ հանրաքվեի դնելու իրավունքով /Հանրապետության սահմանադրության 2-րդ հոդվ./:

Հանրաքվեն, որոշ դեպքերում, կարող է խախտել ժամանակակից պառլամենտարիզմի հիմքերը: Հանրաքվե անցկացնելու հնարավորությունը բոլոր բարդ հարցերի լուծումը կարծես փոխանցում է ընտրողներին, ինչն, իր հերթին, ձգձգում է օրենսդրական գործընթացը և նրա մեջ մտցնում է որոշ անորոշություն: Հանրաքվեներին հաճախակի դիմելու պրակտիկան, ի վերջո, թույլ է տալիս գործադիր իշխանությանը՝ խոհրդարանը շրջանցելով ընդունել որոշումներ: Դա նսեմացնում է ներկայացուցչական մարմինների նշանակությունը: Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլի օրոք խորհրդարանը շրջանցելով որոշումներ ընդունելու պրակտիկան վկայում է այն մասին, որ հանրաքվեն կարող է դառնալ քաղաքական անկայունացման գործոն: Քանի որ ժողովրդական քվեարկության օգտագործումը միակողմանի առավելություն էր տալիս հենց իշխանության գործադիր ճյուղին: Չխորանալով խորհրդարանի իրավակացության և իրավասության որոշ սահմանափակումների մեջ, այնուամենայնիվ պետք է ընդունել, որ ռացիոնալացված պառլամենտարիզմի պայմաններում ուժեղ նախագահական իշխանությունը միաժամանակ զուգակցվում է կառավարության գործունեության նկատմամբ խորհրդարանի արդյունավետ վերահսկողությամբ: Կառավարության երկակի պատասխանատվությունը՝ նախագահի և խորհրդարանի առաջ, հանդիսանում է «ռացիոնալացված» պառլամենտարիզմի տարբերակիչ առանձնահատկությունը:

Մինիստրական պառլամենտարիզմը բնութագրվում է երկու հիմնարար սկզբունքներով՝ նախ, խորհրդարանի որպես գերագույն օրենսդիր մարմնի կարգավիճակով՝ առանց նրա օրենսդրական և վերահսկողական լիազորությունների սահմանափակման և, երկրորդ, խորհրդարանական կառավարմամբ, կառավարության խորհրդարանական պատասխանատվությամբ, որը ստեղծվել է որպես կանոն, խորհրդարանական մեծամասնության հիման վրա: Ընդ որում կառավարությունն օժտված է օրենսդրական նախաձեռնության, ինչպես նաև խորհրդարանի ցրման մասին միջնորդության իրավունքով: Մինիստրական պառլամենտարիզմը մեծամասամբ հիմնվում է կառավարության մեջ անդամության և պատգամավորական մանդատի պահպանման համատեղության սկզբունքի վրա: Դա թույլ է տալիս կառավարության մեջ ներգրավել ոչ միայն կառավարող կուսակցությունների առաջնորդներին, այլև խորհրդարանական մեծամասնության մյուս առավել ազդեցիկ պատգամավորներին և դրանով իսկ վերահսկել խորհրդարանը, միաժամանակ ստանալով զանգվածային կուսակցական աջակցություն:

Բաժանված պառլամենտարիզմի մոդելը բնորոշ է առավելապես այնպիսի հասարակություններին, որտեղ խորհրդարանի և պետության գլխի հարաբերությունները հիմնվում են իշխանությունների խիստ բաժանման, զսպումների, հակակշիռների և փոխկախվածության համակարգի վրա: Այդպիսի պառլամենտարիզմի դեպքում պետական իշխանության օրենսդիր /ներկայացուցչական/ մարմինը կարող է օրենքների օգնությամբ սահմանափակել պետության գլխի գործողությունները, իսկ նախագահն օժտված է խորհրդարանի որոշումների վրա հետաձգիչ վետո դնելու իրավունքով:

Դնելով պառլամենտարիզմի պրոբլեմը՝ մենք նրա գոյության, գործառնության և զարգացման հնարավորությունը տեսնում ենք, նախևառաջ, իշխանությունների բաժանման սկզբունքի պահպանման մեջ, երբ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների մեջ իրականացվում է գործառույթների հստակ սահմանազատում: Որոշելով հասարակության կառավարման կազմակերպման մեջ պառլամենտարիզմի մասնակցության, դերի և տեղի աստիճանը կարելի է քաղաքական պրակտիկայում առանձնացնել պառլամենտարիզմի գաղափարի իրագործման հետևյալ բնութագրական գծերը.

1/ ներկայացուցչական կառավարումը,

2/ խորհրդարանական կառավարումը, որը ներառում է կառավարության ձևավորումը՝ խորհրդարանում ուժերի հարաբերակցության հիման վրա, ինչպես նաև խորհրդարանի առջև կառավարության պատասխանատվության ձևերը և դրանց մեխանիզմները,

3/ կաբինետի կառավարումը, այսինքն գործադիր իշխանության փոխանցումը պետության գլխից կառավարությանը, որին և անցնում են վետոյի իրավունքը և խորհրդարանի վաղաժամկետ ցրման իրավունքը:

Խորհրդարանական համակարգի դասական նմուշն առ այսօր մնում է Մեծ Բրիտանիան: Իշխանության համակարգում անգլիական խորհրդարանի գերիշխանությունը ենթադրում է. 1. բարձրագույն օրենսդիր մարմնի գերիշխանությունը՝ ոչ մեկը, բացի խորհրդարանից, օժտված չէ օրենքներ հրատարակելու իրավունքով, և որ օրենքներն՝ իրենց իրավաբանական ուժով ավելի բարձր են, քան գործադիր իշխանության ակտերը, 2. պետական բյուջեն հաստատելու և հարկերը սահմանելու իրավունքը, 3. խորհրդարանի առաջ կառավարության կոլեկտիվ պատասխանատվությունը, 4. դատավորներին հաստատելու իրավունքը, 5. օրենսդիր իշխանության հետ մրցակցող իշխանությունների բացակայությունը:[1]

1 Конституционное (государственное) право зарубежных стран. – М., 1996, с.407.

Անգլիայում խորհրդարանը գերիշխող դիրքեր է զբաղեցնում գործադիր իշխանության նկատմամբ: Այստեղ հստակ և հետևողականորեն երևում է գործադիր իշխանության որոշակի կախվածությունը օրենսդիր իշխանությունից: Այնուամենայնիվ, հարկ է ընդունել կառավարական մարմինների վճռորոշ դերը պետական գործառույթների իրականացման գործում:

Ի տարբերություն Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի, որտեղ, համապատասխանաբար, տիրապետում է խորհրդարանական միապետությունը, և կառավարման նախագահական ձևը, քաղաքական իշխանության ֆրանսիական համակարգը պատկանում է կառավարման այսպես կոչված խառը ձևին:

Կառավարման այդ ձևը Ֆրանսիայի նախագահին վերապահում է նշանակալիորեն ավելի կարևոր դեր, քան խորհրդարանական մոդելի դեպքում: Ֆրանսիայի նախագահն ընտրվում է ուղղակի ընտրություններով: Նա էապես ազդում է կառավարության կազմավորման վրա: Սակայն կառավարությունը կախված է ոչ միայն նախագահից, այլև պատասխանատու է խորհրդարանի առաջ, կարող է վերջինիս կողմից փոխվել:

Սահմանադրական կարգավորման հետ միասին՝ միաժամանակ այստեղ կարևոր դեր է խաղում կուսակցական համակարգի կառուցվածքը: Ֆրանսիայի նախագահը կարող է իր դիրքերն ամուր պահպանել միայն այն դեպքում, երբ իր տրամադրության տակ ունի խորհրդարանի մեծամասնությունը: Հակառակ այն վիճակի, երբ նախագահը թեև ներկայանում է կառավարության անունից, սակայն Ազգային ժողովում չունի մեծամասնություն, և իշխանության փաստական կրողը վարչապետն է:[1]

Ֆրանսիայի Ազգային ժողովի նախկին նախագահ Էդգար Ֆորի գնահատմամբ՝ «ժամանակակից ֆրանսիական խորհրդարանը այն դերը չի խաղում, ինչ որ անցյալում էր կատարում. նա մղվում է դեպի երկրորդ պլան այն դեպքում, երբ ավելի ու ավելի ուժեղանում է գործադիր իշխանությունը: Այստեղ ակնհայտ է նահանջը ժողովրդավարությունից: Խորհրդարանը ոչ ավելի քան մեկ տոկոսով է փոխում այն, ինչ առաջարկում է կառավարությունը, այդ իսկ պատճառով ֆրանսիացիները կատակով խորհրդարանն անվանում են գրանցման-արձանագրման պալատ»:[2]

Այնուհանդերձ հարցերը, որոնք շոշափում են Ֆրանսիայի կյանքի կարևորագույն հիմքերը /քաղաքացիական իրավունքները և հանրային ազատությունները, քրեական դատավարությունը, հարկերը և թղթադրամների թողարկումը, ձեռնարկությունների ազգայնացումը և ապազգայնացումը, ազգային պաշտպանության կազմակերպումը, կրթությունը, աշխատանքային իրավունքը, արհմիութենական իրավունքը, սոցիալական ապահովում, պատերազմի հայտարարում, վստահությունը կառավարությանը/, նախկինի պես ենթակա են խորհրդարանի իրավասությանը: Եվ, չնայած այդ իրավասության սահմանափակությանը, ֆրանսիական խորհրդարանն օժտված է ինքնուրույնությամբ և անկախությամբ՝ գործադիր և դատական իշխանությունների հետ ունեցած փոխհարաբերություններում:

Նախագահական հանրապետության առավել էական թերությունն անտարակույս, ժողովրդավարական ազատությունների սահմանափակման և ավտորիտարիզմի վտանգի ուժեղացման, խորհրդարանական վերահսկողությունից գործադիր իշխանության նահանջի ընդհանուր միտումի մեջ է: Ամերիկյան հայտնի քաղաքագետ Խ.Լինցի կարծիքով, նախագահական համակարգերը հղի են քաղաքական մշակույթի ներսում հարուցված լուրջ պառակտում-

1 Хубнер Е. Парламентаризм и правительственная система. – Полис, 1992, №3, с.43.

2 Из интервью Эдгара Фора газете “Известия”. – Известия, 1988, 17 июня.

ներով, նախագահի և կոնգրեսի միջև սուր կոնֆլիկտներով, դրանց հաղթահարման բավականին արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությամբ:[1] Այս տեսանկյունից խորհրդարանական համակարգերն ավելի կայուն են և հարմարված ճգնաժամային իրավիճակներին: Սակայն այս պնդումը հազիվ թե կարելի է համարել բացարձակ ճշմարտություն: Խ.Լինցի դիրքավորումը լրջորեն վիճարկվում է բազմաթիվ ռուս հետազոտողների՝ Ա.Յու.Մելվիլի, Ա.Ի.Սոլովյովի, Վ.Ե.Չիրկինի կողմից:[2] Խորհրդարանական հանրապետություններին ևս ոչ պակաս չափով ներհատուկ են անկայունությունը և իշխանության տարբեր ճյուղերի միջև կոնֆլիկտները, հաճախադեպ կառավարական ճգնաժամերը, կառավարչական կառուցվածքների շարունակական վերակազմությունները: Իշխանության կայունությանը նպաստում են ոչ միայն պառլամենտարիզմը և նախագահի բարձր հեղինակությունն, այլև խորհրդարանում և կառավարման մարմիններում նախագահական կուսակցության բարձր ներկայացուցչականությունը, կոալիցիոն քաղաքականություն իրականացնելու համար նպաստավոր պայմանները, գործադիր իշխանության կենտրոնացումը, կառավարչական բարձր արհեստավարժություն և փորձառություն ունեցող կառավարության առկայությունը:

Ժողովրդավարական պետություններում գործադիր իշխանության գործունեության ընդհանուր սկզբունքն այն է, որ ցանկացած կառավարություն պետք է վայելի խորհրդարանի վստահ և արդյունավետորեն վերահսկվի նրա կողմից:

Խորհրդարանական վերահսկողության առանձնահատկությունն այն է, որ առաջադրում և ձևակերպում է նախարարական պատասխանատվության ավելի կոնկրետ հիմնախնդիրը: Դա հանդիսանում է պառլամենտարիզմի հիմքերի հիմքը: Ձևական առումով խորհրդարանի առաջ կառավարության պատասխանատվության պրոբլեմն ունի բազմաթիվ ասպեկտներ, և, ինչպես ցույց է տալիս խորհրդարանական գործունեությունը, այն սերտորեն կապված է խորհրդարանը ցրելու ընթացակարգի հետ:

Այդ կապակցությամբ մեզ հետաքրքրում են նախ, խորհրդարանական պատասխանատվության նշանակության, երկրորդ՝ խորհրդարանական պատասխանատվության ձևերի և, երրորդ, պատասխանատու կառավարության և խորհրդարանի ցրման հարցերը: Դրանք լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն:

Խորհրդարանական պատասխանատվության տակ, նախևառաջ, նկատի է առնվում քաղաքական պատասխանատվությունը: Խոհրդարանի առաջ կառավարության պատասխանատվության սկզբունքը ելնում է ժողովրդի գերիշխանությունն արտահայտելու ներկայացուցչական մարմնի իրավունքի ճանաչումից: Քանի որ ձևականորեն օրենսդիր իշխանությունը, ըստ սահմանադրության, պետության մեջ հանդիսանում է բարձրագույն իշխանությունը, ապա կառավարությունը կարող է կատարել իր պարտականություններն այնքան ժամանակ, քանի դեռ օգտվում է ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցչական մարմնի վստահությունից: Այստեղից էլ բխում է կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու խորհրդարանի իրավունքը:

Ժամանակակից դարաշրջանում

1 Линц Х. Опасности президентства. – Полис, 2001, № 5, с.54-55.

2 Мельвиль А.Ю. Так что же случилось с “российскими” выборами? – Полис, 2003, №4, с.161-164; Соловьев А.И. Взаимоотношение законодательной и исполнительной власти в современном российском обществе: проблемы и перспективы. – Московский Центр Карнеги. – М., 2001, с.12-15; Чиркин В.Е. Государственное и муниципальное управление. – М., Юристы, 2004, с.150-153.

խորհրդարանը գործնականում չի իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ իր վերահսկողական գործառույթները: Անգլիացի հետազոտողներ Ջ.Հարվեյի, Կ.Հուդի կարծիքով. «Համայնքների պալատը ո՞չ կաբինետի, ո՞չ պետական ապարատի, ո՞չ էլ զինված ուժերի նկատմամբ չի իրականացնում գործուն վերահսկողություն: Համայնքների պալատը ներկայացնում է գլխավորապես համաժողով՝ կառավարությունը քննադատելու, չարաշահումները դատապարտելու, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու համար»:[1]

Սակայն ձևական իրավաբանական տեսակետից կառավարության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության եղանակների թվին են պատկանում. կառավարության նկատմամբ վստահության կամ նրա պարսավանքի հարցադրումը, պատգամավորների հարցապնդումները, դիմումները՝ ուղղված կառավարության անդամներին: Բացի այդ, կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողության նպատակով օգտագործվում է և այն ժամանակը, որը տրամադրվում է օրինագծերի քննարկման համար և այլն:

Խորհրդարանական պետություններում կառավարությունը խորհրդարանի առաջ կրում է պատասխանատվություն և պարտավոր է հրաժարական տալ, եթե վերջինիս կողմից ընդունվել է որոշում անվստահության քվե հայտարարելու մասին կամ, եթե օգտագործվել է խորհրդարանը ցրելու իրավունքը՝ նոր ընտրություններում պարտություն կրելու դեպքում: Այդ նույն սկզբունքը գործում է նաև Ֆրանսիայում: Գերմանիայում խորհրդարանը կարող է գոյություն ունեցող կառավարության հրաժարականին հասնել միայն նոր վարչապետ ընտրելու դեպքում, ինչն էապես սահմանափակում է կառավարության պատասխանատվությունը բարձրագույն օրենսդիր մարմնի առաջ:

Առանձին դեպքերում խորհրդարանի կողմից վերահսկողության օբյեկտ կարող են դառնալ պետության գլուխը, դատական իշխանությունը, տեղական ինքնակառավարումը, ինչպես նաև պետական և մասնավոր ձեռնարկությունների գործունեությունը: Վերահսկողության գործառույթի իրականացման ծավալը միատեսակ չէ, հաճախ այն կախված է կառավարման և պետական-ռուցվածքի ձևերից: Կախված կառավարման և պետական վարչակարգի ձևերից հաճախ ինքը խորհրդարանը պրակտիկայում. իր հերթին, նույնպես գտնվում է կառավարության հսկողության ներքո կամ, համենայնդեպս, ենթարկվում է նրա բավական ուժեղ ներգործությանը:

Հարկ է նաև նկատել, որ բոլոր առաջատար երկրներում, բացի Մեծ Բրիտանիայից, խորհրդարանի օրենսդիր գործունեության նկատմամբ հսկողությունն ունի օրինականացված ձև՝ այսպես կոչված սահմանադրական հսկողության տեսքով: Օրինակ, Միացյալ Նահանգներում՝ Սահմանադրության մեկնաբանությունն է Գերագույն Դատարանի, ԳՖՀ-ում՝ Դաշնային Սահմանադրական դատարանի վերսահմանադրական որոշումը:

Այսպիսով, ժամանակակից պետությունների համար ընդհանուր է կառավարության խորհրդարանական պատասխանատվության սկզբունքի թուլացման և գործադիր իշխանության ամրապնդման միտումը: Դա ծնունդ է առնում հասարակական կյանքի բարդացումից, գործադիր իշխանության գործունեության ոլորտ պառլամենտարիզմի չափից դուրս ներխուժումը կանխելու անհրաժեշտությունից:

Մեր կարծիքով, ժամանակակից պառլամենտարիզմի հեղինակության նվազմանը և գործադիր իշխանության ուժեղացմանը նպաստող գործոնների թվում կարելի է առանձնացնել հետևյալները.

1 Харвей Дж., Худ К. Британское государство. – М., 1961, с.71.

Իր գործունեության առանձնահատկության շնորհիվ, իշխանության գործադիր ուղղաձիգն իր տրամադրության տակ ունի կադրեր, ինչպես նաև ֆինանսական և նյութական ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս օպերատիվ կերպով ազդել իրավիճակի վրա: Ստեղծվում է տպավորություն, որ հենց կառավարությունից, այլ ոչ թե օրինադիր խորհրդարանականներից է կախված գործերի իրական վիճակը:

Կառավարության վրա է ընկնում պատասխանատվության մեծ բաժինը՝ կատարված աշխատանքի համար, այլ ոչ թե խորհրդարանականների, որոնք ոչ ամբողջովին և ոչ լիակատար կերպով են պատասխանատու նույնիսկ ակնհայտ թույլ օրենքների ընդունման համար: Պատահական չէ, որ օրենսդիրները հաճախ հանդես են գալիս մեղադրողների, այլ ոչ թե մեղադրվողների դերում, քանի որ քննադատելն ավելի դյուրին է, քան թե գործնականում որոշակի սոցիալ-տնտեսական ուղեգծի իրականացումը: Այդ իսկ պատճառով բնակչությունը թերահավատությամբ և անվստահությամբ է վերաբերվում ժողովրդի ընտրյալներին, որոնք, նրանց կարծիքով, նշանակալի չափով խոչընդոտներ են առաջացնում կառավարության աշխատանքի համար:

Որոշ ԶԼՄ-ներ գտնվում են անմիջական կախվածության մեջ գործադիր իշխանությունից և այդ պատճառով հաճախ կառավարության աշխատանքն ավելի բարենպաստ ձևով են ներկայացնում հանրությանը:

Էտատիզմի ավանդույթները միշտ ուժեղ են զանգվածային գիտակցության մեջ: Ժողովուրդը հաճախ ապավինում է ուժեղ անհատին՝ ի դեմս նախագահի /վարչապետի/, որն ունակ է հաստատելու կարգուկանոն երկրում, այլ ոչ թե ներկայացուցչական մարմնին, որի ներսում ծավալվում են բազմաթիվ, հաճախ անպտուղ բանավեճեր:

Տնտեսապես զարգացած երկրներում, որոնք ունեն նաև կայուն քաղաքական համակարգ, քաղաքացիական հասարակությունը պատշաճ հետաքրքրություն չի դրսևորում քաղաքականության նկատմամբ: Առաջին գիծ մղվում է անձնական հաջողության ձգտումը, իսկ քաղաքականության նկատմամբ հետաքրքրությունը՝ մղվում է ետին պլան և դրսևորվում է հարաբերականորեն բարձր աբսենտիզմի մեջ: Առանձին մարդու կյանքի անհատականացման ֆոնի վրա քաղաքացին կորցնում է իր հետաքրքրությունը խորհրդարանականների գործունեության նկատմամբ: Պատահական չէ, որ պատմության բեկումնային փուլերում հասարակական կարծիքը ավելի հաճախ հայտնվում է երկրի նախագահի, քան թե օրենսդիր մարմնի կողմը: Դա բնավ չի նշանակում, թե խորհրդարանը որպես կարևորագույն ինստիտուտ իրեն սպառել է: Դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ ժամանակակից պայմաններում էլ ավելի է բարձրանում խորհրդարանի դերը հասարակական-քաղաքական կյանքի և պետական կարգի կայունացման գործում: Մասնավորապես, նախ, խորհրդարանը՝ իշխանության այլ մարմինների հետ միասին իրականացնում է պետության հիմնական գործառույթները՝ դրան հաղորդելով ողջ բնակչության հավաքական կամքի իրականացման բնույթ: Երկրորդ, լեգալացնում է իշխանությունը, մարմնավորվելով ժողովրդի ներկայացուցչական կառավարման ձևի մեջ: Երրորդ, խորհրդարանը նպաստում է տարբեր քաղաքական կուսակցությունների միջև փոխզիջումների, համաձայնությունների կայացմանը: Վերջապես, ընդունում է օրենքներ, որոնք կազմում են իրավական վերնաշենքի կարևորագույն մասը:

Այսպիսով, չնայած ժամանակակից պառլամենտարիզմի զարգացման բնույթի հակասականությանը, աշխարհի երկրների մեծամասնությունում խորհրդարանները դարձել են պետական իշխանության օրգանական մասը:

МОДЕЛИ ПАРЛАМЕНТАРИЗМА И ИХ ОСОБЕННОСТИ В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

МАНУК АРУТЮНЯН

Доктор философских наук

ХАЧАТУР МНДЖИКЯН

Соискатель Института философии, социологии и права НАН РА

В статье рассмотрены модели современного парламентаризма и их особенности. Основная исследовательская направленность – раскрытие сложной и противоречивой сущности развития тенденций современного парламентаризма.

MODELS OF PARLIAMENTARISM AND THEIR PECULIARITIES IN THE CURRENT CONDITIONS

MANUK HARUTYUNYAN

Doctor of Philosophy

KHACHATUR MNJIKYAN

Postgraduate Student of the Institute of Philosophy, Sociology and Law, National Academy of Sciences of the Republic of Armenia

The article aims at revealing the models of parliamentarism and their peculiarities. Main scope of the investigation is the tendency of the development of parliamentarism. The authors find out its complicated and controversial nature and put forward some solutions.